



ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«21» Նոյեմբեր 2017թ.

N 392/Մ

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ
2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 4-Ի N 369/Մ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ 2017-2018 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ 12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ
ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով և «Հանրակրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ ենթակետի պահանջով

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել 2017-2018 ուսումնական տարվա 12-րդ դասարանների սովորողների պետական ավարտական քննությունների անցկացման ժամանակացույցը՝ համաձայն Հավելվածի:

2. 2017-2018 ուսումնական տարվա սովորողի գիտելիքների ստուգման, պետական ավարտական քննությունների կազմակերպման և անցկացման աշխատակարգը և ժամանակացույցը հաստատելու մասին հրամանի Հավելվածի 8-րդ կետի 4-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Գիտելիքների ստուգման առաջադրանքները (առնվազն 4 տարբերակ) կազմվում են ԳԹԿ-ի կողմից: Առաջադրանքների նյութն ընտրվում է Նախարարության կողմից երաշխավորված և Հաստատությունում գործածվող դասագրքերից»: Իսկ 12-րդ կետի 14-րդ ենթակետը շարադրել հետևյալ կերպ. «փոխադրության նյութը (տեքստը) և գնահատման չափանիշները հաստատությունները քննության օրը ստանում են ԳԹԿ-ից»:

3. ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարարության աշխատակազմի ղեկավար է. Գրիգորյանին՝ հաստատված ժամանակացույցը տպագրել «Լուսարար» պաշտոնաթերթի առաջիկա համարում և տեղադրել նախարարության կայքէջում:

4. Հրամանի կատարման հսկողությունը վերապահել ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարարի տեղակալ Մ. Համբարձումյանին:



Ն. ԱՂԱԲԱԼՅԱՆ Ն. ԱՂԱԲԱԼՅԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

**2017-2018 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՍՈՎՈՐՈՂԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ,
ԱՎԱՐՏԱԿԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ**

12-րդ դասարանում պետական ավարտական քննություններն անցկացվում են.

Առարկա	Ստուգման օրը
«Հայոց լեզու և հայ գրականություն» գրավոր	25.12.2017թ.
«Հայոց պատմություն» գրավոր	26.12.2017թ.
«Մաթեմատիկա» գրավոր	28.12.2017թ.